



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



**ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան3

Գյուտեր և օգտակար մոդելներ4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ6

Ֆիրմային անվանումներ..... 10

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 10

Լիցենզային և զիջման մասին պայմանագրերի գրանցում 12

Իրավական դաշտ 13

Միջազգային համագործակցություն 13

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝	Արմեն ԱԶԻԶՅԱՆ
	Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ
	Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
	Սուսաննա ՂԱԿԹՅԱՆ
Դիզայնը և էջադրումը՝	Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
 Internet: www.aipa.am
 E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2009թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Միեւնույն ժամանակ ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը եւ բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես իրավական դաշտի կատարելագործմանը, ինչն իրականացվել է ՀՀ կառավարության 2009թ. գործունեության կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում: Մշակվել են ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Ապրանքային նշանների մասին», «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ նոր օրենքների նախագծերը, որոնք կփոխարինեն «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև մշակվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել «Մտավոր սեփականության գնահատման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը:

ԳՑՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2009թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 127 գյուտի եւ 41 օգտակար մոդելի հայտ, որոնցից 157-ը՝ ազգային հայտատուներից, 11-ը՝ օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 3122:

2008թ. համեմատությամբ 2009թ. ստաց-

Աղյուսակ 1

Երկիրը	2008	2009
Հայաստան	233	157
Այլ երկրներ	6	11
Ընդամենը	239	168

ված հայտերի ընդհանուր քանակը պակասել է 71-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 76-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 5-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (Ժնև) ներկայացվող միջազգային եւ Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2009թ. գործակալությունը ստացել է 4 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո: Այսպիսով, 1997-2008թ.թ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 15 եվրասիական հայտ:

Այսպիսով, 1994-2009թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 58 միջազգային հայտ:

2009թ. գործակալությունը ստացել է 3 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում

սահմանել է Եվրասիական հայտի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2009թթ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 18 Եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 272 հայտով, ընդ որում՝

- 222 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու եւ արտոնագիր տալու մասին,
- 34 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու եւ արտոնագիր տալու մասին,
- 15 հայտով կայացվել են որոշումներ

գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին,


- 1 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն անբողջությամբ մերժելու մասին:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:


2009թ. ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 2-ում՝ գրաֆիկի տեսքով:

2009թ. տրվել է գյուտի 156 արտոնագիր եւ օգտակար մոդելի 30 արտոնագիր: Գյուտի Հայաստանի Հանրապետության 2344 արտոնագրերից 2009 թվականի տվյալներով ՀՀ տարածքում գործում են 357-ը, օգտակար մոդելի 179 արտոնագրերից՝ 54-ը:

2009 թվականի տվյալներով ՀՀ տարածքում գործում են 4264 Եվրասիական արտոնագրեր:



Նկ. 1



- A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
- B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
- C. Քիմիա, մետաղագործություն
- D. Մանածագործություն, թուղթ
- E. Շինարարություն, լեռնագործություն
- F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
- G. Ֆիզիկա
- H. Էլեկտրականություն

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱՎԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2009թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1707 հայտեր (որոնցից 1115-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ:

Ապրանքային նշանների 1700 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ է կանչվել 50 հայտ, 100 հայտերով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1297 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 773-ը՝ ազգային հայտատուների անունով), որոնց

բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 1 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, եւ կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշանաբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3330 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են

2738 որոշումներ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ: Նախնական մերժման մասին կայացվել է 591 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 465:

2009թ. ընթացքում երկարաձգվել է 357 ապրանքային նշանի գրանցում:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 11 հայտ:


2008թ. համեմատությամբ 2009թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ 939-ի դիմաց (2008թ.) 1115 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը,

ապա այն աճել է ազգային ընթացակարգով (504- ի (2008թ.) դիմաց 592 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 35 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 19-ը՝ ազգային հայտատուներից, 3-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 1-ը՝ Ավստրիայից, 7-ը՝ Ռուսաստանի Ղաշնությունից, 1-ը՝ Չինաստանից, 3-ը՝ Ճապոնիայից, 1-ը՝ Ուկրաինայից: Դրանցից 19-ը ստացել են վկայագիր, 9-ի համար կայացվել է որոշում վկայագիր ստանալու մասին:

2008թ. համեմատությամբ ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ ազգայինը՝ 8-ի դիմաց (2008թ.) 19 հայտ, իսկ օտարերկրյա հայտատուներինը մնացել է նույնը:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	1115	-	1115
ԱՄՆ	203	154	357
Ավստրալիա	-	35	35
Ավստրիա	-	55	55
Արաբական Միացյալ Ամիրայություններ	6	-	6
Բելառուս	3	48	51
Բենիլյուքս	-	154	154
Բուլղարիա	-	45	45
Գերմանիա	15	262	277
Դանիա	2	21	23
Եգիպտոս	-	28	28
Եվրոպայի Միություն (OHIM)	-	126	126
Էստոնիա	-	3	3
Թուրքիա	2	88	90
Իռլանդիա	11	-	11
Իսպանիա	1	67	68
Իտալիա	2	134	136
Իրան	10	24	34
Լատվիա	-	30	30
Լեհաստան	13	87	100
Լիխտենշտայն	3	38	41
Լյուքսեմբուրգ	5	-	5
Կիպրոս	1	-	1
Կորեայի Հանրապետություն	13	34	47
Կուբա	-	2	2
Հնդկաստան	5	-	5
Հունաստան	11	18	29

Հունգարիա	-	138	138
Ղազախստան	-	8	8
Ճապոնիա	41	82	128
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն	112	85	197
Մոլդովայի Հանրապետություն	-	11	11
Նիդեռլանդներ	3	-	3
Նորվեգիա	-	28	28
Շվեդիա	5	14	19
Շվեյցարիա	26	186	212
Չեխիա	-	24	24
Չինաստան	3	185	188
Պորտուգալիա	-	16	16
Ռումինիա	-	46	46
Ռուսաստանի Դաշություն	26	289	324
Սերբիայի Հանրապետություն	-	27	27
Սինգապուր	1	8	9
Սիրիայի Արաբական Հանրապետություն	-	12	12
Սլովակիա	-	25	25
Սլովենիա	-	48	48
Վիդիզիայան կղզիներ	3	-	3
Վրաստան	3	32	35
Ուկրաինա	24	125	149
Ֆինլանդիա	2	42	44
Ֆրանսիա	4	182	186
Այլ երկրներ	33	255	288
Ընդամենը	1707	3330	5026

ՖԻՐՄԱՑԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2009թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3954 հայտ: Գրանցվել է 3082 անվանում, մերժվել է 123-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի 872 որոշման, ֆիրմային

անվանման մեջ “հայ”, “Հայաստան”, “հայկական” բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 15 թույլտվություն, որը 2008թ. համեմատությամբ 4-ով պակաս է :

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՆՆՈՒՆԳԻԱՆԵՐ

2009 թ. լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 12 համար` № 1(57) - № 12 (68): Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով` հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 156 գյուտի, 30 օգտակար մոդելի, 23 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1250 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին եւ տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության եկարածգման, հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին, ինչպես նաեւ տեղեկություններ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

Իրականացվել է 156 գյուտի եւ 30 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների

եւ հավակնության սահմանումների էլեկտրոնային ձեւերի, ինչպես նաեւ 23 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը եւ հրապարակումը` արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար` համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2008թ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը եւ հրապարակումը հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով եւ դրանց էլեկտրոնային ձեւերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար: Տարեկան հաշվետվությունները ուղարկվել են 26 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2008 թ.

տեխնիկական եւ վիճակագրական հաշվետվությունները գյուտերի եւ օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, սպրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ:

«Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրերը եւ գործակալության 2008թ. տարեկան հաշվետվությունը տեղադրվել են ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ, Հայաստանի ազգային գրադարան եւ ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաեւ ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համա-

տեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 156 գյուտի եւ 30 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները ընթացքում են: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի եւ Կանադայի արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

2009թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ», «Օրենքներ», «Միջազգային պայմանագրեր», «Ենթաօրենսդրական ակտեր», «Ձևաթղթեր», «Պաշտոնական հրապարակումներ» ենթաէջերը:

Իրականացվել է «Արդյունաբերական նմուշների» հիմնապաշարի տվյալների տեղադրումը գործակալության ինտերնետային էջում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մտավոր սեփականության գործակալության ինտերնետային կայքում ստեղծվել է գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգ:

Հիմք ընդունելով «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ նոր օրենքը, որը ուժի

մեջ է մտել 2009 թվականի հունվարի 1-ից, կենտրոնական բանկին հնարավորություն է ընձեռվել ֆիրմային անվանումների հայտերը գործակալություն ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Գործակալության հիմնապաշարների սերվերային մասում հայերեն լեզվով պահպանվող տվյալների կոնվերտացիան ASCII կոդերից Unicod-ի:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է չորս Intel(R) Core(TM)2 DUO տեսակի համակարգիչներով, մեկ տեսածրով, համակարգչային օժանդակ սարքերով եւ սարքավորումներով, այդ թվում՝ անխափան

սնուցման աղբյուրներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները եւ բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ Մտավոր սեփականության տեղեկատվական համակարգում:

Իրականացվել է Windows XP, Windows Vista համակարգերի եւ Microsoft office-ի տեղադրում եւ կարգաբերում, օպերացիոն համակարգի սպասարկում, համակարգչային ծրագրերի տեղադրում եւ կարգաբերում, վնասված համակարգիչների եւ ծրագրերի ախտորոշում եւ անսարքության վերացում:

ԼԻՑԵՆԶԱՑԻՆ ԵՎ ԶԻԶՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՑՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2009թ. ընթացքում քննարկվել եւ

գրանցվել են 97 պայմանագրեր, որոնցից 68-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 23-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 4-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրային հասարակ լիցենզիա տալու, 1-ը՝ գյուտի արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2009թ. շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես մշակվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Ապրանքային նշանների մասին», «Աշխարհագրական նշանների մասին», «Մտավոր սեփականության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք համաձայնեցված են TRIP`s համաձայնագրի եւ Եվրամիության մի շարք դիրեկտիվների դրույթներին:

Սկսվել են «Ապրանքային նշանների մասին», «Աշխարհագրական նշանների մասին», «Մտավոր սեփականության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման հետ կապված աշխատանքները: Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ եւ դիտողություններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ոլորտում Մտավոր սեփականության գործակալությունը հիմնականում համագործակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ), ինչպես նաեւ ԱՊՀ եւ այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ:

Միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԳ եւ ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին

եւ որակավորման բարձրացման դասընթացներին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության չորս մասնագետներ երեք շաբաթով մասնակցել են Ռուսաստանի Դաշնության մտավոր սեփականության պետական ինստիտուտի կազմակերպած ուսուցողական ծրագրերին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության յոթ մասնագետներ մասնակցել են Ժնևում, Մոսկվայում, Թբիլիսիում, Քիշնևում, Կիևում, Սկոպյեում, Բրյուսելում կազմակերպված ուսուցողական ծրագրերին, սեմինարներին եւ այլ պաշտոնական հանդիպումների: Վերոնշյալ

միջոցառումները կազմակերպվել են ֆինանսավորվել են ՄՍՀԿ-ի, ՄՍՀԿ միջազգային ակադեմիայի եւ ԵՄ-ի կողմից:

ԵԱԳ-ի շրջանակներում 2009թ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվական առաքելությամբ Մտավոր սեփականության գործակալություն ժամանեցին ԵԱԳ միջազգային համագործակցության բաժնի տնօրեն Պասկալ Ֆլիքսը, ԵԱԳ փորձագետներ Արունաս Ժելվիսն ու Վլադիմիր Օբուչինան:

2009թ. օգոստոսին Մտավոր սեփականության գործակալությունը հյուրընկալեց Հայաստանում ԱՄՆ դեսպանի խորհրդականին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության շրջանակների ընդլայնմանը, մտավոր սեփականության ոլորտում առկա խնդիրների ու բնագավառի կատարելագործմանը նպաստող

հնարավոր աջակցություն տրամադրելու վերաբերյալ հարցեր:

2009թ. սեպտեմբերի 6-8-ը Աղվերանում կայացավ Արդյունաբերական սեփականության պահպանության ԱՊՀ երկրների միջպետական խորհրդի 18-րդ նիստը: Նիստին մասնակցեցին ԵԱԱԳ անդամ կազմակերպությունների ղեկավար անձինք, ՄՍՀԿ Եվրոպայի եւ Ասիական որոշ երկրների բաժնի աշխատակից Ս.Տլելետսկան եւ ԵԱԳ միջազգային հարաբերությունների նախագծի ղեկավար Նինա Ֆորմբին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Մտավոր սեփականության գործակալության եւ ՄՍՀԿ, ԵԱԱԳ, ԵԱԳ եւ ԱՊՀ երկրների նմանատիպ կազմակերպությունների միջեւ համագործակցության շրջանակների ընդլայնմանը վերաբերող հարցեր: